

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ – 2018

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼ

ՀԱՐՑԱՏՈՄՍ 1

9-րդ դասարան

I. ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ (17 միավոր)

1) <<ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ>> (12 միավոր)

ա. Նշել ճիշտ պատասխանը: (0,5 X 8 = 4 միավոր)

1. Վանի թագավորության ո՞ր արքայի օրոք կառուցվեց Թեյշեբաինի (Կարմիր Բլուր) քաղաքը՝

ա) Սարգուրի I      բ) Ռուսա I      գ) Ռուսա II      դ) Սարգուրի II

2. Ե՞րբ Արտաշեսը և Զարեհը նշանակվեցին սելևկյան կառավարիչներ՝

ա) Ք. ա. 210 թ.      բ) Ք. ա. 201 թ.      գ) Ք. ա. 190 թ.      դ) Ք. ա. 189 թ.

3. Ի՞նչ մակագրություն էին կրում Արտաշես II-ի հատած դրամները:

ա) <<Մեծ արքա>>      գ) <<Բարեպաշտ արքա>>

բ) <<Արքայից արքա>>      դ) <<Հզոր արքա>>

4. Հայոց իշխանի պաշտոնում Աշոտ Մսակերին հաջորդեց նրա որդին՝

ա) Բագարատ Բագրատունին      բ) Սմբատ Բագրատունին

գ) Աբաս Բագրատունին      դ) Շապուհ Բագրատունին

5. Լևոն II Մեծագործը Անտիոքը գրավելուց հետո իշխանությունը հանձնեց՝

ա) Ֆիլիպին      բ) Զաբելին      գ) Ռուբեն-Ռայմոնդին      դ) Կոստանդին Գունդստաբլին

6. Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքությունը հիմնվել է՝

ա) 1441 թ.      բ) 1446 թ.      գ) 1453 թ.      դ) 1461 թ.

7. Հնդկաստանի ո՞ր քաղաքում լույս տեսավ հայոց առաջին պարբերականը՝

«Ազդարարը»:

ա) Կալկաթա      գ) Դելի

բ) Մադրաս      դ) Բոմբեյ

8. 1937 թ. ընդունված նոր Սահմանադրությամբ հայկական պետությունը վերանվանվեց՝

ա) Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն

- բ) Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն
- գ) Հայկական Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն
- դ) Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն

**բ. Լրացնել կամ գրել պատասխանները:** (1 X 4 = 4 միավոր)

**1. Արտաշեսյան արքաների անունները դասավորել ըստ նրանց գահակալման ժամանակագրական հաջորդականության:** (1 միավոր)

- ա) Տիգրան I
- բ) Արտավազդ I
- գ) Արտավազդ III
- դ) Տիգրան III
- ե) Արտաշես II

1	2	3	4	5

**2. Մշակութային իրադարձությունները դասավորել ըստ ժամանակագրական հաջորդականության:** (1 միավոր)

- ա) Գևորգյան ճեմարանի բացումը Էջմիածնում
- բ) Հակոբ Վարդուկյանի թատերախմբի հիմնումը Կ.Պոլսում
- գ) Հայկական Մարդասիրաց ճեմարանի բացումը Կալկաթայում
- դ) Սանասարյան վարժարանի հիմնումը Կարինում
- ե) Մուրադ-Ռափայելյան վարժարանի ստեղծումը Վենետիկում

1	2	3	4	5

**3. Միապետների գահակալման տարիները համապատասխանեցնել նրանց անուններին:**

(1 միավոր)

- |                  |                  |
|------------------|------------------|
| 1. Գագիկ I       | ա) 1089-1125 թթ. |
| 2. Սմբատ II      | բ) 890-914 թթ.   |
| 3. Սմբատ I       | գ) 990-1020 թթ.  |
| 4. Դավիթ Շինարար | դ) 977-990 թթ.   |
| 5. Աշոտ II       | ե) 1184-1207 թթ. |
| 6. Թամար թագուհի | զ) 914-928 թթ.   |

1	2	3	4	5	6

է) 928-953 թթ.

4. Աշխատության վերնագիրը համապատասխանեցնել հեղինակի անվանը.  
(1 միավոր)

- 1) Ստեփանոս Տարոնեցի (Ասողիկ)
- 2) Հովհաննես Դրասխանակերտցի
- 3) Ստեփանոս Օրբելյան
- 4) Սմբատ Գունդատաբլ
- 5) Ներսես Շնորհալի

1	2	3	4	5

- ա) «Ժամանակագրություն»
- բ) «Տարեգիրք»
- գ) «Հայոց պատմություն»
- դ) «Տիեզերական պատմություն»
- ե) «Սիսական նահանգի պատմություն»
- զ) «Թուղթ ընդհանրական»

գ. Լրացնել պատասխանները: (1 X 4 = 4 միավոր)

1. Կատարել համապատասխանեցում.

(1 միավոր)

- 1) Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի կնքումը
- 2) «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի ընդունումը Խորհրդային Ռուսաստանի Ժողկոմխորհի կողմից
- 3) Անդրկովկասի կոմիսարիատի ստեղծումը
- 4) Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագրի կնքումը
- 5) Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կողմից բարենորոգումների ծրագրի ներկայացումը Թուրքիային

- ա) 1917 թ. դեկտեմբերի 29
- բ) 1917 թ. նոյեմբերի 15
- գ) 1914 թ. հունվարի 26
- դ) 1918 թ. մարտի 3
- ե) 1913 թ. հունիսի 4

1	2	3	4	5

գ) 1895 թ. մայիսի 11

2. **Տրված պնդումներից որո՞նք են սխալ: Ընտրել երկու պատասխան:**

(0,5 X 2 = 1 միավոր)

- 1) Առաջին աշխարհամարտի արդյունքներն ամփոփելու համար 1919 թ. հունվարին Փարիզում բացվեց խաղաղության խորհրդաժողով:
- 2) Հայաստանի Հանրապետության կառավարությունը և արևմտահայերն առանձին պատվիրակություններ ուղարկեցին Փարիզ, որոնցից առաջինը գլխավորում էր Ավետիս Ահարոնյանը, իսկ երկրորդը՝ Պողոս Նուբար Փաշան:
- 3) Հայկական երկու պատվիրակությունները համատեղ մեծ աշխատանք կատարեցին և 1919 թ. փետրվարին Անտանտի երկրների պաշտոնական ներկայացուցիչների հետ միասին ստորագրեցին հայկական պահանջների հուշագիր:
- 4) 1920 թ. հուլիսին Իտալիայի Սան-Ռեմո քաղաքում կայացած խորհրդաժողովում վերջնականապես մշակվեց և Թուրքիայի կառավարությանը ներկայացվեց հաշտության պայմանագրի նախագիծը:
- 5) 1920 թ. օգոստոսի 10-ին Փարիզի Սևր կոչվող արվարձանում Անտանտի երկրների և Թուրքիայի միջև կնքվեց հաշտության պայմանագիր, որը ստորագրեց նաև Հայաստանը:

--	--

3. **Տրված պնդումներից որո՞նք են սխալ: Ընտրել երկու պատասխան:**

(0,5 X 2 = 1 միավոր)

- 1) 1941 թ. հունիսի 22-ին Գերմանիան, խախտելով 1939 թ. ԽՍՀՄ-ի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի հետ կնքած չհարձակման պայմանագիրը, հարձակվեց Խորհրդային Միության վրա:
- 2) Գերմանիայի նպատակն էր կայծակնային պատերազմում հաղթանակ տանել ԽՍՀՄ-ի նկատմամբ և վերացնել նրան որպես պետություն:
- 3) Գերմանիայի դեմ պայքարում Խորհրդային Միությանը միացան ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան և այլ երկրներ՝ ստեղծելով հակաֆաշիստական խմբավորում:
- 4) Հայկական զորամիավորումներից առաջինը ռազմաճակատ մեկնեց 76-րդ լեռնահրաձգային դիվիզիան, որը մասնակցեց Կերչի համար մովող մարտերին և ծանր կորուստներ ունեցավ:

5) 89-րդ Թամանյան դիվիզիան (այդ անունը շնորհվել էր ի նշանավորումն Թամանի թերակղզու ազատագրման) գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի հրամանատարությամբ հասավ Գերմանիա և մասնակցեց Բեռլինի ճակատամարտին:

--	--

4. **Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ: Ընտրել երկու պատասխան:**

(0,5 x 2 = 1 միավոր)

- 1) 1985 թ. մարտին փոխվեց ԽՍՀՄ ղեկավարությունը, Խորհրդային Միության նախագահ դարձավ Միխայիլ Գորբաչովը:
- 2) 1988 թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ-ի մարզխորհրդի արտահերթ նստաշրջանը դիմեց Ադրբեջանական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ և ԽՍՀՄ գերագույն խորհուրդներին՝ մարզը Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայաստանի կազմի մեջ ընդգրկելու համար:
- 3) ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը 1988 թ. հուլիսի 18-ի նիստում քննարկեց ԼՂԻՄ-ի մարզխորհրդի և Հայաստանի Գերագույն խորհրդի որոշումները և, բուռն բանավեճից հետո, համաձայնություն տվեց Հայկական և Ադրբեջանական ԽՍՀ-ների սահմանների մասնակի փոփոխությանը:
- 4) 1990 թ. մայիսի 20-ին կայացան ՀԽՍՀ Գորագույն խորհրդի՝ Խորհրդային Հայաստանի պատմության մեջ առաջին ժողովրդավարական ընտրությունները:
- 5) 1990 թ. մայիսին տեղի ունեցած ընտրություններում ընտրողների ձայները գրեթե հավասարապես բաժանվեցին մի կողմից՝ Հայկոմկուսի և մյուս կողմից՝ բնակչության մեծ մասի աջակցությունը վայելող ՀՀԾ-ի, ինչպես նաև ընտրություններին առաջին անգամ մասնակցող ՀՅԴ թեկնածուների միջև:

--	--

2) <<ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ>> (5 միավոր)

**ա. Նշել ճիշտ պատասխանը:** (0,5 X 4 = 2 միավոր)

1. Եգիպտական ո՞ր փարավոնի օրոք Խեֆական պետության հետ կնքվեց «Հավերժական բարեկամության» պայմանագիր:

- ա) Թութմոս III
- բ) Ռամզես II
- գ) Մինա
- դ) Ռամզես I

2. Ո՞ր պետական գործիչն է տասնհինգ տարի անընդմեջ ընտրվել Աթենքի առաջին ստրատեգոս:

- ա) Պիսիստրատ
- բ) Սոլոն
- գ) Պերիկլես
- դ) Կլիսթենես

3. Ե՞րբ է հիմնադրվել Հունգարական պետությունը:

- ա) 955 թ.
- բ) 966 թ.
- գ) 681 թ.
- դ) 1001 թ.

4. Ե՞րբ է Իտալիան հռչակվել թագավորություն:

- ա) 1871 թ.
- բ) 1861 թ.
- գ) 1866 թ.
- դ) 1870 թ.

**բ. (1 X 3 = 3 միավոր)**

1. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:  
(1 միավոր)

- ա) Ռոմանովների արքայատան հաստատումը Ռուսաստանում
- բ) Բաղդադի գրավումը մոնղոլների կողմից
- գ) Բուլղարական թագավորության հիմնադրումը
- դ) Գերմանական թագավորության ստեղծումը

ե) Եղեսիայի կոմսության ստեղծումը

--	--	--	--	--

**2. Համապատասխանեցնել պատմական իրադարձություններն ու դրանց տարեթվերը: (1 միավոր)**

1. Յակոբինյան բռնապետությունը Ֆրանսիայում
2. Գերմանական հեղափոխությունը
3. Ֆրանսիական հեղափոխության հանրապետական շրջափուլը
4. Ռուս-ճապոնական պատերազմը
5. Իրանական հեղափոխությունը

- ա) 1792-1799թթ.
- բ) 1848-1849թթ.
- գ) 1793-1794 թթ.
- դ) 1904-1905 թթ.
- ե) 1905-1911 թթ.
- զ) 1870-1871 թթ.

1	2	3	4	5

**3. Տրված անդումներից որո՞նք են ճիշտ: Ընտրել երկու պատասխան: (0,5 X 2 = 1 միավոր)**

- ա) 1940 թ. ապրիլին Գերմանիան գրավեց Դանիան և Նորվեգիան:
- բ) ՄԱԿ-ի որոշմամբ Պաղեստինում 1947 թ. ստեղծվեց Իսրայել պետությունը:
- գ) Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը (Արևմտյան Գերմանիա) 1955 թ. անդամակցեց ՆԱՏՕ-ին, իսկ 1973 թ. դարձավ Միավորված ազգերի կազմակերպության անդամ:
- դ) 1945 թ. փետրվարին Ղրիմի Յալթա քաղաքում տեղի ունեցավ դաշնակից երկրների ղեկավարների՝ Ու. Չերչիլի, Ի. Ստալինի և Հ. Տրումենի հանդիպումը:
- ե) 1949 թ. Խորհրդային Միության նախաձեռնությամբ հիմնվեց Վարշավյան դաշինքը:

--	--

**II. ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱԶԱՏ ՇԱՐԱԴՐԱՆՔՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ (3 միավոր)**

1. Ներկայացնել Հայաստանի առաջին հանրապետության կայացումը
  - ա. Հայաստանի Հանրապետության հռչակումը
  - բ. Բաթումի պայմանագիրը
  - գ. Իշխանության մարմինների ձևավորումը: Բանակի ստեղծումը: ՀՀ պետական խորհրդանիշները:

**Է. Մինասյան**

**Պատմության հանձնաժողովի նախագահ,  
պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր**

11.04.2018 թ.